

Կ Յ Ո Ւ Ր Գ Ի Ա.

ԱՒՐՀՆԵԱԼ ՈՐ ԱՃԵՑՈՅՑ ԶԾՈՅՍ ԱՄՈՒԼ Ի ՄԷՋ ՏԱՆ ԿՆՈՋՆ ԱՅՐԻՈՅ. ԶԻ ՍՐՈՒԱԿԻ ԵՒ ՍԱՓՈՐԲ ԱՄՈՒԼԻՔ ԾՆԱՆ ՅԱՆԿԱՐԾ ՅԱԿԱՆ ԹԱԻԹԱՓԵԼ

2 Ձի աղքատ էր կրնն, մեծացաւ. զի քաղցեալ էրն յազեցաւ.
 3 Եւ զի մուրանայր յամենայնէ՝ ետ նա կերակուր ամենայն ումեք.
 4 Եւ զի բախեաց զգուրս բազմաց, կացին բազումք առ դուրս նորա.
 5 Ակն բարի ստացեալ ունէր, զի բղխումն ալեր բացեալ ունէր.
 6 Կանձք արքունի ընդ նովաւ էին,
 7 զի բղխումնք վերնոց ընդ նովաւ էին.
 8 Ետ նա հաց քաղցելոց, եւ եւղ այրի կանանց.
 9 Եւ ի տանս եւ ի գլուխս ամսոց առնէր հանգիստ ամենայն ումեք:
 10 Ձի գիտաց զկարիս քաղցելոց, ոչ արգել զհաց ի քաղցելոց.
 11 Եւ զի ողորմեցաւ նմա ճրի Աստուած,
 12 ոչ արգել զողորմութիւն յումեքէ.
 13 Իբրեւ մեծացաւ եւ փարթամացաւ,
 14 Եւ ա՛ռ երանութիւն յամենայն ումեքէ.
 15 Հարակնեաց ախտ զմիամաւր նորա, եւ եթող զնա շունչ իւր:
 16 Ելաց եւ ամբաստան եղեւ զԵղիշայէ առ Եղիշա.
 17 Եկիր, ասէ, յիշատակել զմեղս իմ եւ սպանանել զորդեակս իմ:
 18 Մոլիքն ասեն. Թէ արդար է, ընդէ՞ր ետ մանկանն մեռանել.
 19 Հեթանոսք ասեն. Թէ մեղաւոր էր,
 20 զսափորն եւ զսրուակն ո՞ւ ամեցոյց:
 21 Ուրախութիւն կնոջն դարձաւ ի սուգ,
 22 զի անկաւ ի ձեռս քրմաց նոցա.
 23 Թէ նա է, ասէ, որ արգել զերկինս,
 24 զարձուցէ զշունչ որ միակին է.
 25 զի եթէ լուան նմա ամսք, փոխանակեսցէ մի շունչ ի ձայնս նորա.
 26 Ի ձեռս հոգւոյ մանկանն որ դառնայ,
 27 հաւատարիմ լինի թէ արգել զանձրեւն:
 28 Եթէ մեռեալ կեցուցանէր, ոչ երկնչէր նա ի մահուանէ.
 29 Եթէ շունչ դարձուցանէր, ոչ փախչէր նա ի հեթանոսս.
 30 Եհան զմանուկն ի վերնատունն, եւ մնաց մայրն առ ընկերս իւր.
 31 Եւ ոչ յաւուր մահու ողբոյ իւրոյ
 32 եմուտ տեսանել զյարութիւն նորա:
 33 Ի Ծործորն փախեաւ ի մահուանէ,
 34 Եւ ի Ծարեփթայ եմուտ ի փախուստ.

ԻԱ. 1 D ք. էր եւ: — 3 D կային: — 4 D փոխանակ: — 5 E բղխուն D բղխումն: — 8 E եղ կանաց: — 11 E չարագնեաց: — 16 E է՛լ ասաց... զեւղ տացէ (D զեղիայէ) առ եղիշայ: — 19 D հեթանոսքն: — 21 D ուրախութիւնն: — 27 D հաւատարի: — 34 D Հա-

35 Եւ զի գերծաւ նա ի մահուանէ, որսացաւ զմանուկն ընդ նորա.
 36 որ երկնչէրն ի մահուանէ. մեծարանեաց ի վերայ մահու.
 37 փախստեայն ի մահուանէ թափեաց զմանուկն ի բերանոյ նորա:
 38 Իբրեւ քննեցաւ այրին այսպանութեամբ ազգատոհմի իւրոյ,
 39 Ետ նմա զորդին իւր ի դատիկոնէն իբրեւ ի դրանէ քաղաքին.
 40 անդ սով սպանանէր զնոսա, որպէս ասաց մայր մանկանն.
 41 Եւ զի ապրեցոյց զնա ի սովոյ անտի, զերծոյց զնա ի մահուանէ:
 42 Եկաց յաղաւթս մարգարէն, եւ դարձաւ շունչ պատանեկին.
 43 ոչ մարգարէն եւ ոչ մայր մանկանն
 44 տեսին զելանել եւ զմտանել շնչոյն.
 45 Եւ զի ետ ցնա զորդին մեռեալ եւ ա՛ռ ի նմանէ կենդանի,
 46 անկաւ եւ երկիր եպագ մարգարէին, եւ ետ փառս Աստուծոյ:
 47 Ժողովեցաւ քաղաքն ամենայն ի տեսիլ մեռելոյն որ եկաց.
 48 ուրացան զկուռս եւ ապաւինեցան յԱստուած,
 49 որ կեցուցանէ զմեռեալս.
 50 աւրհնեալ որ ուրախ արար զայրին
 51 ի սովին զոր հալածեաց ի տանէ նորա.
 52 Եւ տարաւ զուարթացոյց զերեսս նորա
 53 մահուամբն զոր հալածեաց յորդոյ նորա:

50 D օրհնեալ տէր: — 52 D դարձաւ փոխ. տարաւ:

Հրտ. Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

Ս Կ Ե Ւ Ռ Ո Ս Ի Ղ Ա Ն Ք Ը

Յիշատական մը, որ գրուած է 1173 թուականին, Ներսէս Լամբրոնացիի հրամանով, կը պատմէ թէ Գագիկ թագաւորի նախարարներէն Ապղղարիպ կ'երթայ Յոյներու Միքայէլ կայսեր եւ անոր կ'առաջարկէ իր ծառայութիւնը: Կայսրը անոր կը պարգևէ Կիլիկիոյի իշխանութիւնը, մասնաւորապէս կ'«Ընձեռէ նմա զՏարսոն քաղաք հանդերձ ընդ ձեռամբ անկեալ զղեկօք»: Հասնելով Տարսոն՝ առաջին գործը կ'ընէ իր իշխանութեան տակ գտնուած Հայերու համար շինել եկեղեցիներ եւ վանքեր: Ապա ուշադրութիւն կը դարձնէ երկու անմատոյց բերդերու՝ Պապեոնի եւ Լամբրոնի — Տաւրոս լեռան ստորոտը եւ ի գլուխ Տարսոնի — որոնք անմատոյց բարձունքներով կ'իշխէին շրջակայ գաւառներու:

Ապղղարիպ Պապեոն իրեն կը վերապահէ, իսկ անառիկ Լամբրոն բերդը, ուր գետեղած էր Պետրոս Առաքեալին մատը, «Հանդերձ այլ եւս պատուական նշխարօք եւ մասամբք ի սրբոյ խաչէն եւ զայլ եւս գանձս իւր», կը պարգևէ «միում ի հաւատարիմ իշխանաց իւրոց, որ կոչէր Աւշին» (Յովսէփեան Գար. Կաթ., Յիշատակարանք Ձեռագրաց, Անթիլիաս 1951, Ա., էջ 541—542 եւ 551—552): Օշին իր ազգատոհմով կը մտնէ Լամբրոն, զոր կը գտնէ անհպելի եւ անառիկ՝ «Վասն յոյժ դժուարաբնակ սահմանացն եւ առաւել ամբութեան բերդին»: Բայց զղեակը երկար ժամանակէ ի վեր ամայացած էր, ուստի կը ձեռնարկէ գայն նորոգել: «Եւ պատրաստեաց նախ ի ծայր բերդիս հան-



զբաղման սուրբ Պետրոսի նշխարաց» (անդ, էջ 541—542):

Լամբրոնի մեծագործ տէրն եղաւ Օչին Բ., պատուած կայսեր կողմանէ Սեւաստոս տիրոջով. «Սա շինեաց եկեղեցի մեծ եւ վայելուչ ի Լամբրոն բերդի եւ փոխեաց ի նմա գնչխարս Ս. Առաքելոյն Պետրոսի»: Ապա կը կառուցանէ՝ «Չաստուածահարաչ սուրբ ուխտս եւ զսուրբ կաթողիկէ եկեղեցիս սուրբ Փրկիչ իւրով անձամբ աշխատեալ եւ մեծաւ փափաքանօք կատարեալ: Բազմացոյց ի սմա եղբայրութիւնս եւ հանապազ խնամ տանէր առ սա հանդերձ բարեգարդ զուգակցան իւրով տիկնաց տիկին Շահանդիստիւ: Որ է տապանատուն ազգատոհմի իւրեանց»:

Օչին Սերաստոս, որ բուն բաղձանքով շինած էր վանքն ու եկեղեցին, երկու դիտաւորութիւն ունէր իր մտքին մէջ: Եկեղեցին պիտի ըլլար իր ազգատոհմին դամբանարանը եւ վանքը իրմէ ընծայ իր Սմբատ որդւոյն, որ եկեղեցական կոչումի հետամուտ էր:

Սկեւոյ կամ Սկեւոյ անունը, որքան գիտեմ, առաջին անգամ, կը յիշուի 1173ին: Գրեգոր Արեւելցի գրեւէր կը գրէ՝ «Իւր սեպհական անապատն Սկեւոյ անուն կոչեցեալ» (անդ, էջ 446): Այդ անշուշտ անունն էր այն տեղւոյն կամ ազարակին, որուն վրայ հիմնուած էին եկեղեցին ու վանքը եւ կամ այդպէս կոչուած մասունքներու համար, ինչպէս քիչ վերջ խօսք պիտի ըլլայ:

Յիշատակութիւններէն այնպէս կ'երեւայ թէ «Շինեաց» բառը պէտք է առնել, վերաշինել, վերականգնել՝ ընդարձակելով եւ բարեգործելով, իմաստներով եւ այդ պարագային պիտի ընդունինք, որ կանխաւ հոն վանք մը եղած ըլլայ — եւ այն բնականաբար եկեղեցիով մը — եւ յետոյ այնքան փոփոխութեան ենթարկուած, որ յունական ոճը կորսնցուցած է (հմտ. քիչ մը վարը):

1. ՍԿԵՎՈՍԻ ՆՊԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒ ԱՆՈՒՆԸ

Սկեւոյ վանքը Պատմագրութիւններու եւ Յիշատակագրութիւններու համաձայն հիմնուած է՝ «Հուպ ի բերդն անառ Լամբրոն» կամ «Առնթեր հայրենատուր ամրոցի տերանց մերոց Լամբրոնի» (Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 63 եւ Յովսէփեան Գարեգին Կաթ. Յիշատակարանք Չեռագրաց, Ա., էջ 563): Լամբրոնի բերդը

բարձրացած է Տարսոնի մերձ, Տաւրոսեան լեռներու մէկ սարին վրայ եւ տեղւոյն դիրքով ու շէնքին ամուր կառուածքով նկատուած է «անառ, անմատոյց եւ անմատչելի»: Անոր ստորոտը, ինչպէս կը հաւաստէ Տէր Ղազարեան, շինուած է վանքը եւ անկէ գատուած է ձորով մը (Բաղմալէպ, 1948, էջ 87—88): Եւ այդ բնական ու հասկնալի է, զի վանքը այնքան անմատոյց վայրի վրայ ըլլալու կարիքը չունէր, մանաւանդ թէ ժողովուրդին մատչելի եւ մօտ ըլլալու էր, որպէս զի կարենար իր աղօթքը ընել եկեղեցւոյ մէջ, վանականներու հետ յարաբերութեան մէջ ըլլալ եւ յատկապէս առաջնորդին հետ, որ Տարսոնի եպիսկոպոսն էր եւ ժամանակ մը իր հայրապետական աթոռը հոն հաստատած էր:

Շատ ցաւալի է որ Սկեւոյ վանքի շէնքերու եւ անոր աղօթավայրերու, ինչպէս եւ անոնց կերտուածքի՝ ոճի մասին նկարագրութիւններ եւ համանման տեղեկութիւններ ժամանակակիցներէ եւ յետագայ գրողներէ ու ճամբորդներէ չեն հասած կամ նոյն իսկ չեն աւանդուած: Հ. Ղ. Ալիշան, որ ընդարձակ գրութիւն մը¹ նուիրած է սոյն վանքի, կը գրէ՝ «Այլ կրկին էին մենաստանքն, մին բուն վանքն եւ միւսն անապատն, յառաջունն է Ս. Աստուածածին եկեղեցին մեծ, զոր ասեն շինեալ Բ. Օչնի հօրն Ս. Ներսէսի» (Սիսուան, էջ 97): Անապատը գտնուած պիտի ըլլայ վանքին բաւական մերձ վայրի մը վրայ եւ այն անապատն էր եւ փոքր բնակարաններով, որոնց մէջ ուզած են ամփոփուիլ — միշտ կամ երբեմն ներանձնական — ներքին — կեանքի կամ դիտութեան նուիրուած անձեր, անխռով ու անշփոթ իրենց առաջադիր նպատակին հասնելու համար. սակայն հոն անգամ Ներսէս Լամբրոնացի իր սրտի խաղաղութիւնը չէ կրցած ունենալ հաւանօրէն իր համբաւի պատճառով եւ ստիպուած է այլուր մեկնիլ (Սիսուան, էջ 66):

Վանքն ու անապատը մէկ ամրոցը թիւն կը կազմէին եւ փոխադարձաբար գործածուած են. այսպէս՝ «Մեծանուն անապատն Սկեւոյ, Մեծ ժողովարանս Սկեւոյի, ի հռչակաւոր անապատս Սկեւոյ. Յաստուածապահ Սրբարանս մեծ ուխտիս

1 Հ. Ալիշանի «Սիսուան»ի մէջ Սկեւոյի մասին այս գրութիւնը ունեցած է արտատպութիւն:

Սկեւոյի, ի սուրբ մենաստանս Սկեւոյ, մեծ եւ հռչակաւոր ուխտս Սկեւոյ» (հմտ. վարը Յիշատակագրութիւնները):

Սկեւոյի վանքէն զատ կար Գեմըռձգերի² վանքը Լամբրոնի հովանաւորութեան տակ, որուն եկեղեցին Ս. Աստուածածին կը յորջորջուի եւ վանքը եղբայրանոց կամ Միաբանակեաց վանք՝ անապատ կոչեցեալ: 1198ին գրեւէր մը Ոսկերբանի ճառերը օրինակած է Ներսէս Լամբրոնացիի համար «յեղբայրանոցս որ ի դաւառիս Լամբրոնի, որ գեղջուկ բարբառով ի հին սովորութենէն եւ Գեմըռձգեր յորջորջի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ յառաջնորդութեան սրբասէր եւ հարազատ եղբարց Աւետեաց եւ Յովհաննիսի» (Յովսէփեան Կաթ., անդ, էջ 631—632): Իսկ 1205ին Ներսէս Լամբրոնացի քահանան կը գրէ թէ իր մօրեղբոր Պատարագի մեկնութիւնը՝ երկու գրչէ եւ երկու տեղ օրինակուած է. «Գրեցաւ սկիզբն դրոցս, որպէս յայտնի է որքանութիւն (որպիսութիւն) գրոյն այլայլութեամբ ի ձեռն ուրումն եղբոր Աւետեաց սրբասէր քահանայի ի միաբանակեաց վանս Անապատ անուանելոյ, իսկ այն ի Սկեւոյն վերասացեալ, ձեռամբ ուրումն ի կլերիկոսաց սրբոյ եկեղեցւոյն Զօրավար անուանեալ» (Սիւրմէեան, Յուցակ Եւրոպ., էջ 48—49): Անտարակոյս Աւետեաց գրեւէր նոյն է Աւետիքի հետ, եւ Անապատ կոչուած Միաբանակեաց (Միաբանակեցաց) վանքը նոյն Գեմըռձգեր կոչուած եղբայրանոցի հետ, որ կը գտնուէր Լամբրոնի գաւառի մէջ, բայց ոչ Սկեւոյի մէջ: Անհաւանական չէ որ այս եղբայրանոցը նոյն ըլլայ Սաղրուի Ս. Աստուածածնի վանքի հետ, ուր կ'առանձնանար Ներսէս: Անոր տեղը Սամուէլ Սկեւոյցի այսպէս կը նկարագրէ. «Կոչէր անապատն բնակութեան Աստուածածին Սաղրուի ի հոսանս գետոյն Ժեռակիրայ եւ մերձ ի նմին տաճար սրբոյն Գէորգեայ...»³ (Յովսէփեան Կաթ., անդ, էջ 545): Անապատս, ուր ստէպ կ'այցելէ Ներսէս, նոյն իսկ իր գրադարանը — այսինքն գրքերը — հետը կ'առնէր, Սկեւոյէն շատ հեռու չ'երեւնար (Հանդ. Ամս., 1954, էջ 79—83): Սկեւոյի մերձ է կուսաստան մը

² Հմտ. այս վանքի մասին, Սիսուան, էջ 114, 518 (նաեւ 537 եւ 547): Գեմըռձգեր եւ Գեմըռձգի սրբոցի վանքեր են:
³ Հմտ. Սաղրուի Ս. Աստուածածնի վանքի մասին Բաղմ. 1954, էջ 125:

կամ կուսանոց մը, ուր Ն. Լամբրոնացիի մայրը իր աղջիկներու հետ կը մեկուսանայ եւ կ'ապրի: Յետագային հոն կը համախմբուին 18 կուսաններ եւ կը գործեն (Սիսուան, էջ 113 եւ 533): Տէր Ղազարեան զայն կը միացնէ Յովհանայ անապատի հետ (Բաղմ. 1948, էջ 88):

Վերագանալով եկեղեցիներու հարցին այնպէս կ'երեւայ թէ Ս. Աստուածածին եկեղեցին թէեւ նորոգուած եւ մասով մըն ալ ընդարձակուած եւ բարեգործուած, կցուած է Ամենափրկիչ եկեղեցւոյ հետ եւ կազմած է անոր մէկ մասուրը Ս. Աստուածածին խորանով եւ ասկէ Գրչագիրներու այս արտայայտութիւնները. «Ընդ հովանեաւ սուրբ Եկեղեցւոյ, որոյ անունն սուրբ Փրկիչ կոչի, եւ մօր նորին Ս. Աստուածածնի եւ Գերահռչակ կենսունակ սուրբ Նշանի» (Յովսէփեան Կաթ., անդ, էջ 564 եւն. հմտ. դեռ Ալիշան, Սիսուան, էջ 98 եւ Բաղմալէպ 1948, էջ 87—88): Համանման է կարծիքը նաեւ Տէր Ղազարեանի, սա բացառութեամբ որ անիկա եկեղեցին Ս. Աստուածածին կը կոչէ. կը գրէ՝ «Իմ կարծիքով Սկեւոյի վանքը ունէր մէկ եկեղեցի երեք խորաններով, որոնցմէ երկու խորանները կը կոչուէին Ս. Ուաչ եւ Ս. Նշան: Այս ենթադրութեան կը յանգիմ նկատի ունենալով աւերակուած Սկեւոյի վանքին տարածութիւնը: Իրականին մէջ ընդարձակ աւերակոյտ մըն է Սկեւոյն, բայց կարծես խուցերը եւ հիւրընկալ սենեակները աւելի տարածուն են քան իսկական տաճարը» (Բաղմալէպ, 1954, էջ 127):

Այս եկեղեցիներու կամ եկեղեցւոյ, ինչպէս եւ վանքի՝ «Աւերակը կը գրաւէ ընդարձակ գետին մը. կը տեսնուին պարիսպներու հսկայ քարեր, կամարներու, խուցերու բաժանումներ, որոնք քարակոյտներ են այժմ: Աւերակը վերածուած է մացառուտքի» (անդ, 1948, էջ 88):

Ինչպէս եկեղեցիներու կամ եկեղեցւոյ, նմանապէս վանքի շինութեան եւ հիմնարկութեան եւ բարեգործութեան մասին համեմատաբար դոյզն են մեր տեղեկութիւնները: Հ. Զարբհանէլեան օգտուելով Հ. Ալիշանէն կը գրէ՝ «Հռչակաւոր եղև յայսմ դարու — ԺԲ. — եւ Սկեւոյ վանքը Լամբրոնի, որուն հիմնադիրն ու սկզբնաւորութիւնը, անձանօթ, բայց ժամանակակից կ'երեւայ բերդին շինութեան եւ պայծառանալուն: Երբ

Օչին առաջին հաստատեց հոն իր բնակութիւնը, թերեւս հնագոյն իսկ եւ ի Յունաց կառուցուած, որովհետեւ անունն ալ աւելի յունական կը թուի քան թէ հայկական» (Պատմ. հայ. դպ., Ա., Վենետիկ 1932, էջ 706):

Ճիշդ կը համարիմ ըսուածները: Սկեւայի վանքը նախահայկեան փոքրիկ հիմնարկութիւն մը եղած կը թուի: Բայց զայն, հայագրի իշխանները ժառանգելէ վերջ՝ դոհացուցիչ չգտնելով, ինչպէս եւ անձուկ, նորոգեցին, ընդարձակեցին, ծաղկեցուցին եկեղեցիներու հետ եւ յունական ոճը փոխեցին, հայկականացուցին, որով Տէր Ղազարեան յունական ճարտարապետութեան հետք ամենեւին չէր գտներ անոնց վրայ (Բագմ. 1954, էջ 127): Անոր անունը հայերէնով կարելի չէ գիտնել եւ ընդունելի կերպով մեկնել: Սարգիս գրքի մը յառաջաբանին մէջ կայ՝ «Գրեգոր գերադով վարդապետն Սկեւոն» (Տաշեան, Յուցակ, էջ 75): Եւ Մալխասեան իր հայերէն Բացատրական Բառարանին մէջ (հտր. Դ., Երեւան 1945, էջ 228) կը գրէ՝ ՍԿԵՒՈՒՆԵ sKeuarion, sKehrion փոքրիկ կարսիք, արկղ, եկեղ. արկղ, որի մէջ պահուած են խաչը, այս բառից է Սկեւոյ վանքը եւ սրանից Սկեւոացի մակդիրը: Կը յաւելում եւ ես՝ կայ յունարէն sKeuophylax բառը, որ կը նշանակէ այն պաշտօնեայն որուն յանձնուած են եկեղեցւոյ եւ անոր գոյքերու պահպանութիւնն ու ինամքը» Buchberger Dr. M., Lexikon für Theologie und Kirche, Freiburg 1937, Թ. հտր. էջ 620:

Տէր Ղազարեան կը խորհի թէ Սկեւոյ անունը Սկիւո բառէն ծագում առած ըլլայ, զի սոյն վանքի գտնուած վայրի վրայ շատ սկիւոներ կը գտնուին⁴ (Մասիս 1954, Թ. 9):

2. ՍԿԵՒՈՒՆԵՍ ԵՐԵՎԱՆԸ ԿԱՄ ՆՇԵԱՐՆԵՐՈՒ ՊԱՆԱՐԱՆԸ

Ինչպէս Սկեւոյ վանքի անուան ստուգաբանութենէն — հմմտ. վերը — յայտնի կ'երեւայ ան ունեցած է սուրբերու բազմաթիւ նշխարներ ու մատուցներ, որոնք գրուած ու ամփոփուած են յարմար դարանի կամ տապանակի մէջ եւ բնականաբար յարգուած ու մեծարուած: Երոստղէմի Թ. 97

⁴ Վարդան Աշխարհաբի «Կեւեոնայ անապատ» Արիւնի համաձայն՝ «Թուի Սկեւոյ գրեթէ կամ ընթեանի» (Միտուան, էջ 144):

Ձեռագրին մէջ Մեղր վարդապետը 1190ին կը պատմէ. «Ի սոյն ժամանակս (ԺԱ. դար) այր ոմն բարեպաշտօն եւ երկիւղած յԱստուծոյ ի նախարարաց թագաւորին Հայոց Գաղկայ, որոյ անուն Ապղարիպ յորջորջիւր, եկեալ առ արքայն Յունաց Միքայէլ, մտեալ ի ծառայութիւն ինքնակալին, որոյ պարզեւեալ զիշխանութիւն աշխարհիս Կիւրեղեցւոց, ընձեռնէ նմա թագաւորն զՏարսոն քաղաք հանդերձ ընդ ձեռամբ անկեալ զղեակաւք: Եւ սա եկեալ բնակեցաւ ի սմա եւ շինեաց բազում վանաւրայս յաշխարհիս յայմիկ: Եւ ընդ ժամանակս ընդ այս սուրբ եւ շնորհալից մատն սուրբ Առաքելոյն Պետրոսի գոյր առ սմա, զոր մեծաւ պատուով մեծարէր եւ փառաւորէր: Եւ զի ունէր ընդ իշխանութեամբ իւրով զղեակս ամուրս եւ վայելուչս ի լերինս Տաւրոսի անուամբ կոչեցեալ Լամբրուն եւ Պապիւուն: Երկէր յարկ բնակութեան սուրբ առաքելական մատին եւ անդ ունէր ի պահեստի հանդերձ այլ եւս պատուական նշխարաւք եւ մասամբ ի սրբոյ խաչէն: Եւ զայլ եւս զանձն ամրացուցանէր ի սոյն զղեկի... ի խնամոց սուրբ Առաքելոյն մնաց անհպելի ամուրն Լամբրուն ընդ իշխանութեամբ Աւշնի...» (Յովսէփեան Կաթ., Յիշատ. Ձեռ., Ա., էջ 551. հմմտ. անդ, էջ 561 խաչի մատուցի մասին):

Քաղաքական աննպաստ պարագաներու հետեւանքով սուրբերու նշխարները կ'անարգուին ու կը ցրուին եւ թէ փրկարար ձեռք մը չ'ըլլար անոնք պիտի անյայտանային: Կոստանդին Կաթողիկոսն է, որ զանոնք կը փնտոէ ու կը գտնէ⁵: Տախտակածե տապանակ մը շինել կու տայ ճարտար անձերու եւ մասունքներն անոր մէջ կ'ամփոփէ: Ապահետեւալ գրութեամբ ապագային կը թողու պատմութիւն մը, որ հետաքրքրական է, թէ եւ բաղձալի էր որ՝ աւելի ընտիր ոճով յորինուած ըլլար: Կարդանք զայն.

Եւթն հարիւր Հայոց թուական
Ընդ քառասուն ամաց ի լրման
Եւս երկուց ի սոյն պայման:
Որչափութեամբ լցեալ այսքան:
Ես Կոստանդին անձն տարտամ:

⁵ Ալիշան Կոստանդին Բ. Պրուսագործ կաթողիկոսը կը համարի Սրբարանին շինել տուողը (Միտուան, էջ 107), մինչ Հ. Ալիսեան Կոստանդին Գ. Լամբրունացի կաթողիկոսը (Աւետիք, 1941, էջ 59—60):

Որ եմ ծառայ Տեառն անարժան:
Սնեալ եմ ի Կլայն հոռմայական:
Ուր մեծ աթոռն է հայկազեան:
Յորում գըլուին պատուական:
Նստիւր ի գահն պետական:
Հայր հանուր Հայոց լրման:
Որ Յիսուսի գոլով փոխան:
Յաջորդ գնդին սուրբ Գրիգորեան:
Լուսաւորչին զՀայաստան:
Յորոց սկսեալք ցմեզ հասան:
Կաթողիկոսքն սրբազան:
Որք եւ եղեն ինձ պաշտպան:
Խնամեայ զթով զիս հայրական:
Ուր եւ ի վեր քան զիմն արժան:
Հաւատացաւ ինձ աստիճան:
Նստիլ յաթոռ այցելութեան:
Գաւազանաւս հովական:
Արդ ըստ աստուածեան յաջողման:
Ի դէպ ժամու եւ պատահման:
Բարւոյն Հեթմոյ արքայութեան:
Որ գիտնական եր սրբազան:
Եղեւ յաթոռ վսեմական:
Սկեւոյ վանացս ի հովութեան:
Եզայ տեսուչ այն մեծ տան:
Եւ վրձակին իւր սեպհական:
Այլ երանի թէ աստ վախճան:
Առնոյր զրոյցս պատմութեան:
Աւաղ մեծի թշուառութեան:
Բողոր ազինս հայկական:
Ամաւք յառաջ քան զթուական:
Առեալ եղեւ Հոռոմիկայն:
Նստեալքն երբեմն անդ բնական:
Եղեն վարեալք ի գերութեան:
Եկեղեցիքն երկնաման:
Յանհաւատիցն կոխեցան:
Եւ սրբութիւնքն աստուածական:
Ձեռաւք պղծոց շօշափեցան:
Եւ սուրբ մատանքն աստուածարան:
Ի նախատինս ցրուեցան:
Սուրբ հայրապետքն եւ որք նորայն:
Գերեալք յաշխարհն Տաճկաստան:
Վայ եւ աւաղ հագար բերան:
Ընդ մեծ չարեացս որ մեզ գիպան:
Փղձկիմ յիշմամբ այնց սրբութեան:
Յորս եմ անեալ ի մանկութեան:
Ձոր յար ի միտս իմ նկատմամբ:
Նստիմ ի սուգ նսեմական:
Այլ գեթեղել իմ ի Սկեւոյն:
Ստիպեց զիս փափաք ցանկութեան:
Դնել զայս մասունս ի հանգստեան:

Ի յոյս մեծի ինձ բարութեան:
Եւ ի սոփոփանս այս տրտմութեան:
Որ միշտ խոցէ զիմ խոհականս:
Ուստի չքեզ այս խմբարան:
Սուրբ նշխարացս պահարան:
Կազմել ետու յոյժ հրաշագան:
Ըստ սրբութեանց ճահողական:
Փորձ արծաթով եւ պատուական:
Խառնեալ ոսկով բոցանման:
Պճնեալ ի զարդ գարմանագան:
Յաւրինուածովք վայելչական:
Ականակապ ընդելուզմամբ:
Իբր գտախտակն ահարոնեան:
Սրբոցս որ աստ հավաքեցան:
Սուրբ ոսկերաց հանգստարան:
Որպէս արձան ինչ բանական:
Հոչակ սրբոցն յաղթութեան:
Նշխարքս սուրբ որ աստեղան:
Ձորս ոչ արժե նիւթք ամենայն:
Դեզ են ցաւոց բժշկական:
Մեծ աւգնականք ազգի մարդկան:
Սաստաւղ այսոցն չարութեան:
Կոչողք զհրեշտակս մեզ պահպան:
Յորում եւ ես յայս ապաստան:
Երեւալ պարկեշտ զայս սրբարան:
Սրբոցն ընծայ հաճոյական:
Եւ ինձ նշան բարւոյ յիշման:
Նայ եւ իմոցն որ զիս ծնան:
Եւ բնաւ ազգիս լրութեան:
Ձոր տամ ընծայ նուիրական:
Փառաց փրկչին տնաւրէնութեան:
Ի տաճարին իւր սրբութեան:
Ի սուրբ Փրկիչն որ ի Սկեւոյն:
Ձոր պահեսցէ Տէր ընդ երկար:
Աւուր յանշարժ հաստատութեան:
Եւ գրողը Հայաստան:
Առցն ի գոգ ծնողական:
Արդ ես ձայնեմ ձայն ըղձական:
Եւ բարբառեմ բան մախթական:
Ի յընթանուրս կարդամ զայս բան:
Սփռեմ զհայցուածս աղերսական:
Որք տեսանք զայս պահարան:
Հըպիք ի սուրբս, որ աստ կան:
Ձի հայցուածովք ձեր մախթական:
Խնդրուածովք աղերսական:
ՁՀեթում Հայոց արքան ազնեան:
Թագել ընդ սուրբս արքայութեան:
Եւ երախտեացն որ յիս հասան:
Առնուլ զվարձս հատուցման:

(Ալիշան, Սիսուան, էջ 107—109, հմմտ. Սարգիսեան, Յուզակ, Բ., էջ 1234):

Տապանակին կամաքը կամ հիմը հաստատուն է՝ «Տախտակ փայտեղէն, այլ համակ պատեալ ոսկեզօծ արծաթի թիթղամբ. 0.63 երկայն, 0.35 լայն եւ 0.075 թանձր: Յաջակողմն կամ երեսն ունի դրունս երկփեղկիս, որոց վերին կամ արտաքնադոյն երեսն արդ մերկացեալ է ի նախկին պաճուճանացն, ծածկեալ է ոսկեզօծ թղթովք, իսկ մէջն արծաթի թիթղամբ քանդակազարդ է եւ տառագրեալ» (Սիսուան, էջ 109): Դրան եւ պահարանին ներսի կողմը կը գտնուին զանազան պատկերներ ու դէմքեր. այսպէս՝ Տիրամօր Աւետումի, Փրկչին խաչելութեան, Գրիգոր Լուսաւորչի, Պետրոս, Պօղոս, Թադէոս եւ միւս Առաքեալներու, Յովհաննէս Մկրտչի, Ստեփանոս Նախավկայի, Վարդան Մամիկոնեանի, եւ ուրիշ Սուրբերու, ինչպէս եւ Հեթում թագաւորի — մեծ մասով յաջող, յատկանշական եւ գրաւիչ: Շատ բնական է եզրակացութիւնը թէ սոյն Սրբաբանին մէջ գտնուած ըլլան նշխարները կամ մասունքները, այն ամէնուն, որոնց անունները կամ պատկերները դրուած են, գուցէ նոյն իսկ ոմանց անունը լուծած: Անոր վրայ գրուած են Հեթում թագաւորի եւ Կոստանդին շինել կամ կերտել տուողի մասին հետեւեալ տողերը.

Հաւրն անեղի եւ անեղակից Բանին ծնաւ...
Եւ բոլորից սրբարարի սուրբ մկրտաւ...
Թագաւորին երկնաւորին նախ վկայաւ...
Որք առ Քրիստոս էք համարձակ բարեխաւսաւ...
Ի թիթղ հայցման լերուք նմայ ձեր նվիրաւ...
Միշտ Սկեւոյին խնամաւք լինել անշարժ պահաւ...
Թախանձելով առ նոյն լերուք կրկին մաղթաւ...
Գոլ զՀեթում երկար կենաւք Հայոց տիրաւ...
—
Կայուն վերին արքայութեան ունաւ փականց...
Ով եւ անաթ կրեալ զՅիսուս ի մէջ ազանց...
Սր. Թագէտոս տվեալ բժիշկ տան արգարանց...
Տէր Սուրբ Գրիգոր նոր առաքեալ Հայաստանայց...

Նուիրեմ մաղթանք ձեզ որոց աստ սուրբ նշխարաց...

Դրողիս զձեզ աստ ի հանդիստ պատվոյ փառաց...

Ի Քրիստոսէ ինդրել ջնջումն իմոց մեղաց...
Նոյն եւ բոլոր Հայոց փրկել ի փորձութեանց...:

Մինչ Կոստանդին կը դնէ սուրբերու նշխարները «Ի հանգստեան», անոնք եւս Հայուն բախտակից կ'ըլլան եւ Սրբարանը կը զաղթէ կը տարուի օտար աշխարհ — հեռաւոր Իտալիա: Թէ ի՞նչ պարագաներու տակ, այդ անձանօթ կը մնայ, սակայն որովհետեւ Աստուածատուր Փափագեանց զայն 1828ին Դոմինիկեան կրօնաւորներու վանքին մէջ — Բիեմոնդի թագաւորութեան Աղեքսանդրիա քաղաքին մերձ Բոսկոյ ըսուած վայրը — կը գտնէ, կարելի է խորհիլ թէ Կրկնիա գրտնուող կամ այցելող կրօնաւորներ զայն առած տարած են Իտալիա: Եւ գուցէ յարափոփոխ բախտով ու վայրով վերոյիշեալ տեղը բերուած ու դրուած ըլլայ: Սակայն յետոյ քաղաքական ուրիշ յեղաշրջումներու եւ յեղափոխութիւններու պատճառով կ'իյնայ՝ «Ի ձեռս զօշաքաղից, կապտեալ եւ կողոպտեալ ի զարդուց, իսկ նշխարացն սրբոց թերեւս ի նոյն իսկ կրօնաւորացն բարձեալ... յորոց — այս է ի զօշաքաղիցն — սակաւ ամօք յառաջ 1880 թափէ եւ գնէ հարուստ Հնասէրն Պաղիլիսքի ի Բարիզ» (Սիսուան, էջ 112):

Ազգային այս սրտագրաւ Սրբարանի մասին այժմ այսքան: Զայն մանրամասնօրէն նկարագրած է Հ. Ալիշան եւ անկէ նկարներ եւս հրատարակած, ինչպէս եւ յիշած է Կարիբի եւ Պրոմիսի ուսումնասիրութիւններն ու գրութիւնները (հմմտ. Սիսուան, էջ 107, դարձեալ՝ Mélanges orientaux textes et traductions publiés par les professeurs de l'école spéciale de langues orientales vivantes à l'occasion du sixième Congrès international des orientalistes réuni à Leyde. Septembre 1883 Paris. հմմտ. եւ Արձագանք, 1884, էջ 174—179 եւ Սարգիսեան, Յուզակ, Բ., էջ 1234):

Խոտակերաց վանքի նշխարներու պահարանը բաւական նմանութիւններ ունի Սկեւոյի Սրբարանի հետ (հմմտ. Յովսէփեան Գար. արքեպ., Խաղրակյանք կամ Պոռչեանք, Վաղարշապատ 1928, էջ 190—200, ուր եւ տեսնել՝ Գեղարդայ վանքի եւ

Նոյեան տապանի պահարանները, էջ 250 եւ 266):

3. ՍԿԵՎՈՒԱՅԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ

Սկեւոյի վանքը եղած է Լամբրոնի հայ իշխաններու եւ թերեւս անոնցմէ առաջ յոյն զրեակատէրերու հանգստարանը — դամբանարանը, ինչպէս Կոստանդին 1198ին կը հարգէ «Հանգստարան նախնեաց իւրեանց» (Սիսուան, էջ 97): Անկէ առաջ Յովհաննէս Վարք Հարանցի մը յիշատակագրութեան մէջ կ'աւանդէ «է տապանատուն ազգատոհմի իւրեանց» (Յովսէփեան Կաթ., Յիշատ. Ձեռ. Ա., էջ 553):

Հոն կը թաղուի նաեւ Ներսէս Լամբրոնացի (Սիսուան, էջ 99), որ իրաւունք ունէր այնտեղ ամփոփուելու իրրեւ շառաւիղ Լամբրոնեան գերդաստանի եւ եպիսկոպոս — առաջնորդ ու միաբան Սկեւոյի: Երկար տարիներ յետոյ իր արեւնակիցներու մօտ կը դրուի Յորբէի կոմսուհիին Կոս—Մարի կամ Կալի—Մարի տիկնոջ աճիւնը (անդ, էջ 102):

Սկեւոյի մէջ կ'ամփոփուին դարձեալ սոյն վանքի միաբաններու եւ յատկապէս առաջնորդներու անշունչ մարմինները. այսպէս՝ Սամուէլ Սաղմոսագիլը կը մաղթէ՝ «Եւ զիմ աղքատութիւնս դնել սորին օրհնութեամբ (Ն. Լամբրոնացւոյ) ի դամբարան հանգստեան, ընդ սրբոց իմոց հարցն... Յօղ աղօթից ձերոց կաթեցէ ի հոգի մերոյն հանգստեան եւ բեղմնաւորեալ անուցէ զթաղեալքս յարգանդ երկրի» (Սիսուան, էջ 98 եւ Յովսէփեան Կաթ., Յիշատ. Ձեռ., Ա., էջ 549):

4. ՍԿԵՎՈՒԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ

Թէ Սկեւոյի մինչեւ հայկականացումը եւ նաեւ ընդարձակումը՝ որո՞նք զայն առաջնորդած են ու ղեկավարած, չենք գիտեր: Կրնայ ըլլալ որ երբ ան հայ իշխաններու յանձնուեցաւ՝ ժամանակ մը օտարազգի առաջնորդներ անոր ղեկը իրենց ձեռքի մէջ դեռ ունեցան, մինչեւ որ Ներսէս Լամբրոնացի համակերպեցաւ եւ իրեն նոյն իսկ ժամանակաբար յանձնուած վանքի առաջնորդութիւնն ու հոգածութիւնն ստանձնեց:

Ժամանակակից սովորութիւնը նկատի ունենալով կարելի է ենթադրել որ Առաջ-

նորդներու ընտրութեան կամ նշանակումի մէջ կարեւոր դեր ունեցած ըլլան Լամբրոնի տէրերը եւ այդ յայտնի կը տեսնուի Ներսէս Լամբրոնացիի անուանումի առթիւ: Եւ որովհետեւ Սկեւոյի առաջնորդները ստէպ նմանապէս Տարսոնի եպիսկոպոս ու հովիւ էին, ուստի եւ անոնց ընտրութեան եւ կարգումին մէջ հեղինակաւոր մասնակցութիւն ունէր Կաթողիկոսը եւ այս շատ բնականաբար եւ կանոնադրութեան համաձայն:

Սկեւոյի յականէ յանուանէ յիշուած առաջին մեծ առաջնորդն է ՆԵՐՍԷՍ ԼԱՄԻՐՈՆԱՅԻ, որուն «Սեփական» անապատը կ'անուանէ Գրիգոր զրչագիր, զի զայն իր հօրմէն ստացած էր ժառանգութիւն եւ ընծայուած Տիրամօր եւ այս վանքի: Ներսէսի Հեթում եղբայրը ուրախ է որ անոր յանձնուած է մենաստանը եւ անշահախնդիր ու աննախանձ կ'աջակցի իր եղբոր վանքի ու եկեղեցիներու յառաջադիմութեան եւ բարգաւաճումին: «Զայն ամենապատիկ վայելչութեամբ շինեալ էր... եւ նկարագրութեամբ պատկերաց զարգարեալ» (հմմտ. վերը): Իսկ ինքը, Ներսէս, թէեւ պատիւէ ու փառքէ միշտ խուսափող, սակայն համակերպելով բարձրագոյն ճոխութիւններու հովուական գաւազանը ձեռք առնելէ յետոյ՝ «Իրուն հարեալ ի վշտակցութիւն ժողովոյս բարեկարգութեամբ տնօրինէր ի հօրէն իւրմէ աւանդեալ սուրբ ուխտիս...» (Յովսէփեան Կաթ., Յիշատ. Ձեռ., Ա., էջ 543—547): Զոյգ հարագատները «Պայծառացուցանեն զայս աստուածաշէն միաբանութիւնս» (անդ, էջ 564):

Ինչպէս ամէնուրեք հարկաւ նախ Սկեւոյի մէջ Ներսէս Լամբրոնացի «Ուսոյց բարեգարդապէս կրօնաւորացն հաստատել սահմանադրեալ օրհնութեամբ կրօնաւորութեան սքեմով եւ կնկղով եւ պարկեշտանալ կերակրով եւ կանոնաւոր բարեձեւութեամբ զհարցն օրինակ բերելով: Թարգմանեաց գտուրը Հարցն վարսն եւ զարբոյն Բենետիկտոսի կանոնադրական սահմանադրութիւն⁶: Շինէր եւ մեծապայծառ եկեղեցիս եւ զվկայարանս մարտիրոսաց եւ զարգարէր նկարագրելով զամենայն տնօրինական գործս Փրկչին մերոյ» (Հայապատում, մեծագիր, Բ., էջ 423—424): Նմանապէս Կիրակոս Գան-

⁶ Հմմտ. Ալիշան, Սիսուան, էջ 431:

ձակեցի կը հաւատէ. «Շինեաց Ներսէս եկեղեցիս հրաշագան, որ կոչի Սկեւոս... եւ կարգեաց զպաշտօն վանիցն ըստ օրինակի այլոցն ազգաց սարկաւազաւ եւ դարաւ եւ անձածկոյթ գլխաւ, զոր յորովք դարովեն ի Հայոց» (Պատմ. Հայոց, էջ 63):

Ներսէս իբրեւ արթուն հովիւ՝ նախանձախնդիր է որ վանքի միաբանները իրենց քահանայական ու կրօնաւորական պարտքերու մէջ հաւատարիմ ըլլան: Ներկայացող պարագաներու համեմատ գիտէ զանոնք խրատել, յանդիմանել, քաջելիբել եւ առաջնորդել (Հայապատում, էջ 423—424): Դարձեալ ջանադիր է որ անոնք զբռնէ ու գիտութեան ծառայեն: Եւ ահա անոր առաջնորդութեան շնորհիւ՝ Գէորգ վարդապետ կը հաւաքէ ու կը յօրինէ Վարք Հարանց, Ծերունին Սամուէլ կ'արտադրէ Սաղմոսաց մեկնութիւնը, եւ Կոստանդին՝ Աւետարան մը: Իսկ ինքը անոնց օրինակ կ'ըլլայ կանոններու խիստ պահպանութեամբ, անմրցելի ընթացքսիրութեամբ ու խոկումով եւ արտադրութեամբ Առակաց մեկնութեան (Սխուան, էջ 98 եւ Յովսէփեան, Հաւաք. Յիշատ., Ա., էջ 603—604):

Ներսէս Լամբրոնացի իր առաջնորդած եւ հովանաւորած վանքի՝ հովանիի ներքեւ կը ննջէ յաւիտենական նինջը (հմմտ. վերը) եւ անոր կամարներու տակ կը հանդէտ մշտապէս՝ Ան որ անկողին չուզէ տեսնել եւ գիշերուան քնէն ինքզինքը զրկեց՝ աւելի երկար ժամանակ աղօթել ու գրել կարենալու համար եւ այդպէս իր կեանքի կարճ ընթացքը երկարեց ու համբարեց զբռնէ հունձք մը ապազայ սերունդի համար: — Ներսէսի արգիւնքը Սկեւոսյի համար մեծ է եւ շատ գնահատելի: Չայն կանգնեց, պայծառացուց եւ անոր ոյժ ու կորով ներարկեց դարերով պողարեր ըլլալու:

Հաւանօրէն Ներսէսի յաջորդը կ'ըլլայ ՎԱՐԳԱՆ, որ միանգամայն Լամբրոնի եպիսկոպոս է եւ Լեւոն թագաւորի ուրախարար գահակալութեան հանդէսին ներկայ կը գրտնուի (Սխուան, էջ 101 եւ Հայապատում, Բ., էջ 438):

⁷ Յովհաննէս Ժողովածուի մը մէջ 1198ին կը մտնէ յիշելի «ԳՏԷր Ներսէս սրբազան արքեպիսկոպոսն Տարսնի եւ առաջնորդ սուրբ ուխտիս Սկեւոս» (հմմտ. Յր. Մուրատ, Յայտնութեան Յովհաննու Հին հայերէն թարգմանութիւնը, Երուսաղէմ 1905, էջ 2—է, հմմտ. Հանդ. Ամս. 1933, էջ 263—264, էւն):

Իսկ անոր կը յաջորդէ թերեւս ԳՐԻԳՈՐ ՍԿԵՒՈՒՅԻ կամ գուցէ ուրիշ ԳՐԻԳՈՐ մը: Այս՝ ծանօթ է Գէորգ Սկեւոսցիէն, որ կը գրէ «Տէր Գրիգոր Դիտապետ ուխտի Սկեւոս» (հմմտ. Սխուան, էջ 101):

Տարիներ յետոյ — 1263ին — «յառաջնորդութեան սուրբ ուխտիս (Սկեւոս) Տեառն Մխիթարայ եպիսկոպոսի», կը գրուի մագաղաթեայ բոլորգիր Աւետարան մը (Ակիւնեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Երեւան, Թ. 84, հմմտ. վարը, Յիշատակագրութիւնք ԺԲ.):

Անոր յաջորդը կրնայ ըլլալ ՍԻՄԷՈՆ, զի 1272ին Ստեփաննոս քահանան «ի խնդրոյ Գրիգոր քահանայի... ի յիշատակ անուցչին՝ իւրոյ հոգեւոր Տեառն եւ վարժապետի Տէր Սիմէոնի առաջնորդի սրբոյ ուխտին Սկեւոս» կը գրէ Մանրուամունք մը (Ակիւնեան Հ. Ն., անդ, Երուսաղէմ, Թ. 1654, հմմտ. վարը Յիշատ. ԾԳ.):

Ապա 1285ին կը գրուի Աստուածաշունչ մը Աստուածատուր քահանայի եւ Ուաչատուր պատանիի համար «յառաջնորդութեան Տեառն ՄԻՆԱՍՍՅ» (հմմտ. Սխուան, էջ 106 եւ վարը Յիշատ. ԺԹ.):

Անուանի առաջնորդ է ԳԵՈՐԳ ՍԿԵՒՈՒՅԻ, «այր փիլիսոփայ եւ կատարեալ իմաստասէր եւ անուանի» (Սխուան, էջ 232—233):

Ասոնց եւ յաջորդներու՝ ՍՏԵՓԱՆՈՍ ՍԿԵՒՈՒՅԻԻՆ, որ մինչեւ Սիւնիք կը ճամբորդէ, յաջորդութեան կարգերն ու ամաթիւրը ճշդուելու կարօտ են (Սխուան, էջ 106):

Գուցէ առաջնորդի հանգամանքով է որ ՄԱՐԿՈՍ վարդապետ Սկեւոսցին Միսի 1807ի Ժողովի մասնակցած կ'ըլլայ (Սխուան, էջ 107, հմմտ. Պալճեան Հ. Ա., Կաթ. վարդապետութիւն ի Հայս, Վիեննա 1878, էջ 275 եւ 281): Իսկ Տարսնի եպիսկոպոս կը յիշուի այդ Ժողովի մէջ Յովհաննէս, որ Ատանայի 1816ի Ժողովին ալ կը մասնակցէ (հմմտ. Պալճեան, անդ, էջ 274, 280, 297—298):

Մարկոսէն առաջ առաջնորդ եղած է ԿՈՍՏԱՆԴԻՆ, Գ. Լամբրոնացի կաթողիկոսը:

⁸ Ձինքը (կարծես) Հ. Ակիւնեան Մինասի յաջորդը կը զնէ եւ անոր երկարածից առաջնորդութիւն կ'որոշուի, սրով Մարկոսի վանահայրութիւնը կը մերժուի (Աւետիք, 1941, էջ 59—61):

(հմմտ. վերը մասունքներու ընդարձակ Յիշատակագրութիւնը եւ Աղաւունքի, Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղէմի, էջ 213 եւ Աւետիք, 1941, էջ 59—62):

1314ին գրուած Մաշտոցի մը յիշատակագրութեան մէջ կայ՝ «Ես ԿՈՍՏԱՆԴԻՆ եպ. Պեհենցի ոգւով տառապեալ ամէն բարի եւ Աստուծով առաջնորդ աստուածաբնակ ուխտիս այս Սկեւոսյի ետու գրել զանուանեալս Մաշտոց» (Ակիւնեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. Գէ. 497 եւ հմմտ. դեռ Լալայեանց, Յուցակ հայ. Ձեռ. Վասպ., էջ 60—62):

Լամբրոն բերդի սեպհականատէրերու առատաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ ու Սկեւոս վանքի առաջնորդներու բարեք զեկավարութեամբ եւ ուսումնասիրութեամբ, համանուն վանքը քանի մը դար կեանք կ'ունենայ եւ ազգին կու տայ հայրապետներ, մատենագիրներ, նկարիչներ ու գրիչներ:

Հայրապետները կը վարէին Տարսնի թեմը եւ սոէպ, այլ՝ ոչ միշտ՝ Սկեւոսյի առաջնորդութիւնը, եւ գիտակից իրենց պաշտօնին ու աստիճանին առաւելութիւններու եւ պարտականութիւններու կը ջանային համապատասխանել գործով ու խօսքով: Տրուեցաւ անոնց անուանացանկը, որ գոհացուցիչ է եւ պահպաներ զգալի են: Արդ նկատի առնենք մատենագիրներն ու նկարիչներն եւ գրիչները: Հասկնալի է որ հակիրճ տեղեկութիւններով պէտք ենք գոհանալ:

5. ՍԿԵՒՈՒՅԻ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԸ

Մատենագիրներ:

Ասոնց շարքին մէջ առաջին տեղը կը զբաղէ ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ, որուն վարքն ու գրութիւնները կարելի է ըսել մանրամասնօրէն արդէն ծանօթ են եւ կարիք չկայ անոնց մասին խօսելու (հմմտ. Հանդէս Ամսօրեայ, 1954, Թ. 1—6, որ ամբողջութեամբ Ներսէս Լամբրոնացիի նուիրուած եւ ուր տար կեանքին ու գործին հայոց ամէն կէտ կ'կատի առնուած է): Բայց պատշաճ է որ զոնէ ուրուագիծ մը տրուի յարարերութեամբ Սկեւոսյի, որուն — այսպէս արտայայտուիմ ոգին ու փառքը եւ հարազատ ներկայացուցիչն եղած է:

Ներսէս Լամբրոնացի ծնած է Լամբրոն բերդի մէջ եւ որդին է Օշին զղեակաւորի եւ բարեպաշտ Շահանգուխտի, որոնք զինքը Աստուծոյ կը նուիրեն: Ներքին մղումներու անսալով Սմբատ — այս է անոր մկրտութեան անունը — կը մտնէ Սկեւոս վանքը եւ վարքով ու գիտութեամբ կը հռչակուի: Դեռ շատ երիտասարդ՝ քահանայ կը ձեռնադրուի եւ Ներսէս անունը կ'առնէ ի յարգանս Ներսէս Ծնորհալիի: Քանի մը տարի յետոյ Տարսնի վրայ եպիսկոպոս կը ձեռնադրուի եւ Սկեւոս վանքի առաջնորդ կը կարգուի: Փառքէ ու պատիւէ խոյս տուող է եւ սակայն անոնք իրրեւ շուք անոր իւրաքանչիւր քայլին կը կցուին: Արտաքին շատ լայն գործունէութիւն կ'ունենայ, ճամբորդութիւններ կ'ընէ, գրադարտութեան կ'ենթարկուի Լեւոն թագաւորի առջեւ, բայց գիտէ իր դատը փաստօրէն եւ անփախօրէն պաշտպանել: Կը գտնէ ժամանակ առաւել չափով աղօթքի եւ գիտութեան նուիրուելու: Գիշերները ցերեկ կ'ընէ իր նպատակին հասնելու: Կը թողուրազմաթիւ գրութիւններ: Ահա անոնց անուանացանկը. Մեկնութիւններ Ս. Պատարագի, Արարածոց, Ժողովողի, Առակաց, Իմաստութեան, Սաղմոսաց, Դանիէլի, ԺԲ. Մարգարէից, Տէրունական աղօթից, Էւն Էւն. (հմմտ. Աւետիք, 1951, էջ 113 եւ Կիրակոս Գանձակեցի, Պատմ. Հայոց, էջ 63). Ծառեր ի Համբարձունքի Տեառն, Ի Գալուստ Հոգւոյն Սրբոյ, Ի Փոխումն Կուսին, Ի Տնտես, ՅԱնուակ որդին. Ատենաբանութիւն, խօսուած Հոսովկայի Ժողովի մէջ, Թուղթեր առ Լեւոն թագաւոր, առ Ոսկան ճգնաւոր (հմմտ. Հանդէս Ամս. 1954, Թ. 1—6):

Ներսէս Լամբրոնացի ունի բարձր եւ յստակ տեսութիւններ, ուղիղ զաղափարներ, խտացած ուժեղ ոճ եւ կանոնաւոր եւ պարզ լեզու (հմմտ. Քիպարեան Հ. Կ., Պատմութիւն հայ գրականութեան, Վիեննայի 1954, էջ 284. տես զեղեցիկ զրուագ մը Ներսէսի մասին Հ. Ալիշանէն Սխուան, էջ 86—95 եւ Հ. Ն. Ակիւնեանէն ընդարձակ ուսումնասիրութիւն մը, Հանդէս Ամսօրեայ, 1954, Թ. 1—6, էջ 85—251):

Ներսէս Լամբրոնացին ծնած 1954ին, կը մեռնի 1198 Յուլիս 14ին: Բայց իր կեանքով ու գործով անմահ է Հայութեան մէջ:



Ներսէսի գրական գործունէութիւնը կը շարունակեն իր հարատակները, աշակերտները եւ անոնց հասցուցած սերունդները, սակայն անոր համանման մը Սկեւոյի պատերը չեն տեսներ:

Ահա անոր աշակերտը ԽԱՉԱՏՈՒՐ վարդապետը (հմմտ. Յովսէփեան Կաթ., Յիշատ. Ձեռ., Ա., էջ 562), որ կը սգայ վահաս ու տարածամ մահը վարդապետին՝ «Ողբք ի Տէր Ներսէս արհին, սասցեալ Խաչատուր պաշտօնէի, նորուն աշակերտի. կը սկսի «Ամ գահ թողում, գամաթ մոռանամ, զիմ լուսեղէն Տէրն մեծարեմ, զիւր անդեան պարտքն վճարեմ...»: Ստուգիւ սրտայոյզ Ողբ է այս, որուն մէջ երեւան կու գան աշակերտի մը անկեղծ սէրը եւ մեծարանքը հանդէպ իր կարող Ուսուցիչին եւ անկէ անդարձ մեկնումով զրկուելուն համար ունեցած ցաւն ու կսկիծը: Կարեւոր են հետեւեալ տողերը, որոնց մէջ Ներսէսի երկերէն յիշուած են.

- Եկ Սողոմոն, զի անպիտանացար,
- Եկ Դանիէլ, որ խոպանացար,
- Եկ Արարածք լաց, որ փակեցար,
- Արի, եկ Դաւիթ, որ անպարտեցար:
- Առնում վայով վայիս ձայնակից,
- ԸզՅովհաննէս որդին Որոտման,
- Եկ ժողովէ զՏեսիլն եւ պահէ,
- Ձի այլ չկայ Տէրն որ մեկնէ.
- Լացողք Թըղթոց Կաթողիկէից,
- Եկէք եւ լիք վայիս ձայնակից,
- Եկ Առաքեալք Տարսնցի,
- Ու առ ամփոփէ զբանքս որ լսեցի,
- Եկ Աթանաս լալոյս ձայնակից
- Բաներս քո են ի Պատարագի...:

Բնականաբար Խաչատուրի Ողբը շատ աւելի արժէք կ'ունենար, եթէ լեզուին աւելի փոյթ տարած ըլլար եւ առնական գծերը շեշտուած ըլլային:

Ողբը ձեռագիրներու մէջ բաւական յաճախ արտագրուած է եւ քանի մը անգամ ալ հրատարակուած. այսպէս. հմմտ. Բաղմասովէպ, 1874, էջ 242, անդ, 1886, էջ 101, Սիւսուան, էջ 94, Հայապատում, Բ., էջ 433 եւ Հանդէս Ամսօրեայ, 1954, Թ. 1—6, էջ 254):

Ներսէսի ժամանակակից է Գէորգ վարդապետ — կոչենք երէց — համանուն Սկեւ-

ոացիի հետ չչիտթելու համար: Ներսէսի հետ Գերմանացիներու Փրեզերիկոս կայսեր զիմաւորութեան կերթայ եւ անոր առաջնորդութեան ատեն կը հաւաքէ ու կը կազմէ Վարք Հարանց՝ «Ի վանքս Սկեւոյ... հրամանաւ ձգնազգեաց եղբոր Խաչատուր», որ կրնայ վերոյիշուած Խաչատուր վարդապետ ըլլալ» (Սիսուան, էջ 98): Հ. Չամչեանի համաձայն Եսայեայ մեկնութիւն մը եւս գրած կ'ըլլայ, եթէ ինչպէս Հ. Ալիշան կը խորհի, Գէորգ Սկեւոացիի գործը անոր վերագրուած չէ (անդ, էջ 98):

Ներսէս Լամբրոնացիի հետ Սկեւոյի մէջ ապրած է ՍԱՄՈՒԷԼ վարդապետը, որ իր վկայութեան համաձայն 1190ին արդէն «Ծերութեան ալեօք կոծեալ է» եւ կը ցանկայ... «Դնել ի դամբանարան հանդրստեան» (Յովսէփեան, անդ, էջ 549): Անիկա վանքի առաջնորդէն հրահանգ կը ստանայ սաղմոսաց մեկնութեան արտագրութեան շարունակութեան գոր արդէն սկսած էր Գէորգ վարդապետը եւ մեզի անձանօթ պատճառներով չէր կրնար աւարտել: Յանձնառու կ'ըլլայ եւ անոր վերջաւորութեան կը կցէ՝ «Պատմութիւն Տեան Ներսիսի Լամբրոնացւոյ եւ արքեպիսկոպոսին Տարսնի Կիլիկիոյ Շարաբեալ Սամուէլ կրօնաւոր ձեռնասուն աշակերտէ նորին, կը սկսի՝ Ընդ նուազիլ թագաւորութեան եւ իշխանութեան Հայոց, յորժամ յափշտակեցաւ յիսմայելացոցն մայրաքաղաքն Անի» (Տաշեան, Մայր Յուլ., էջ 332):

Սամուէլ, նաեւ իրրեւ աշակերտ Ներսէսի, ունեցած է անոր հանդէպ բուն սէր ու համակրանք եւ շատ յուզիչ կերպով ներկայացուցած է Տարսնի հայրապետին արտաքին գործունէութիւնը եւ ներքին կեանքը: Անոր գրութիւնը ստէպ տպուած է. հմմտ. Ալիշան, Հայապատում, էջ 413—418, Յովսէփեան Կաթ., Յիշատ. Ձեռ., Ա., էջ 542—550, Թարգմանուած՝ նաեւ աշխարհարարի, հմմտ. Յուլարեր, 1953, Թ. 268—269):

Ն. Լամբրոնացիի ժամանակակիցէ մը ետ գրութեան բովանդակութենէն դատելով անոր աշակերտէ մը հասած է՝ «Ներբողեան» եւ յիշատակ սուրբ եւ երիցս երանեալ տիեզերալոյս հօրն մերոյ սրբոյ Ներսէսի ամենիմաստ վարդապետին եւ արհիեպիսկոպոսին Տարսնի: Կը սկսի. Սուրբ եւ երջանիկ հայրն

մեր Ներսէս էր ազնուական ծնողաց զաւակ...» (հրտ. Ալիշան, Հայապատում, էջ 419):

Դարձեալ Ներսէս Լամբրոնացիի ժամանակակից է եւ անոր շատ մտերիմներէն ԳՐԻԳՈՐ ՍԿԵՒՈՒՅԻ, այսպէս յորջորջուած զի Սկեւոյի միաբաններէն է եւ կը համարիմ թէ յանդուզն վարկած չէ Հ. Ալիշանի կարծիքը թէ անիկա Վարդան եպիսկոպոսէն յետոյ այս վանքի առաջնորդութեան ղեկը իր ձեռքին մէջ առած ըլլայ եւ եպիսկոպոսացած, քանի որ նոյն իսկ կաթողիկոսական ընտրելի նկատուած է: Կոչուած է նմանապէս Լամբրոնացի, ըլլալով «Ծննդեամբ ի նոյն ինքն ի Լամբրուն աւանէ» (Սիսուան, էջ 100): Հոչակուած է իրրեւ «մեծ, սուրբ եւ գերագով» (Տաշեան, Յուլ., էջ 751. Սիսուան, էջ 100): Լեւոն Բ. զինքը շատ կը գնահատէ ու կը մեծարէ: Անոր թարգմանելու տայ Նիկիայի Յովհան կամ Վահան Պատրիարքին Հայերու Չաքարիա կաթողիկոսին գրած թուղթը եւ անկէ կ'ընդունի Ս. Հաղորդութիւն, նախապէս անոր ըլլալով իր վերջին խոստովանանքը: Նմանապէս անոր շատ բարեկամ էր Լամբրոնի զղեկատէրը Կոստանդին: Հակիրճ՝ ընտիր անձնաւորութիւն եղած է եւ ժամանակակիցներու յարգանքին լիապէս արժանացած:

Հ. Չարբհանէլեան կը գրէ՝ «Այլ եւ երկասիրութիւններ շարադրած է, յորոց ոմանք իւր իսկ անուամբ կը յիշուին եւ այլք անձանօթ մնացած. նոյն անուամբ ուրիշ հեղինակներ ալ ըլլալուն» (Պատմ. հայ Դպրութեան, Ա., էջ 715): Ունի քանի մը ներբողեան, այսպէս՝ «Բան գովեստի պատմադրաբար յազազս ծննդեան, սննդեան եւ քաղաքավարութեան եւ վերափոխման ամենասուրբ Կուսին ասացեալ ի Գրիգորէ մենաւորէ» (անդ, էջ 715): Անոր նշանաւոր Ներբողեանը նուիրուած է Ն. Լամբրոնացիին, գրուած անոր համանուն քեռորդին խընդրանքով, 1205 թուականին: Լաւ է եւ իմաստնալից, զգացումներով լի, ամէն կարեւոր կէտ նկատի առնուած, նաեւ հոստորական ու սրտազրաւ, սակայն ուժեղ թուիչ կը պակսի, ինչպէս եւ բարձր ոճ (Քիպարեան, Պատմ. հայ Գրիկն., էջ 349): Բայց կարելի է ըսել թէ Ն. Լամբրոնացիի պայծառ ղեմքը ընդերու շրջանակի մէջ կը ներկայանայ (հմմտ. Յովսէփեան Կաթ., Յիշատ.

Ձեռ., Ա., էջ 633—634. Ալիշան, Հայապատում, էջ 424 եւ Սոփերք, ԺԵ. հար.): Անոր գրչէն է նաեւ «Պատմութիւն վարուց Գրիգոր Լուսաւորչի» — ընտիր եւ յաջող (Սարգիսեան, Յուլ., Բ., էջ 338):

Գրիգոր Սկեւոացիի անունով հասած են դեռ Աղօթքներ առ Ս. Աստուածածին եւ «Ճառ ի Յարութիւն Քրիստոսի» եւ «Որհնուրդ մեծի Ուրբաթուն կամաւոր եւ փրկագործ շարձարանաց եւ մահուան Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի ի բանն Եսայեայ, որ ասէ, Տէր, ո՞ հաւատաց լրոյ մերոյ: Տեսութիւն սրբոյ Հաւրն եւ մեծ հոստորին Գրիգորի Սկեւոացւոյ, զոր արարեալ է ի խնդրոյ բարեպաշտ իշխանի Կոստանդեայ տեառն Լամբրաւնի» (Յովսէփեան, անդ, էջ 634 եւ Սիսուան, էջ 100): Անոր գրչի արդիւնք է Յովհաննէս Մկրտչի նուիրուած հրաշլի շարականը, որ կը սկսի «Արեգականն արդարութեան»: Էջմիածնի Թ. 1244 Ձեռագրի մասին Կարենեանց կը գրէ՝ «Մեկնութիւն Աւետարանին Մատթէոսի, ութածաւալ բոլորագիր, ունի զպատշաճաւոր աւուր ընթերցուածս ի մեկնութեանց Աւետարանին ի Մարութայէ եւ Գրիգոր վարդապետէ Լամբրոնացւոյ, թերի, սխալ գրչութեամբ» (Յուլ. հայ. Ձեռ. էջմ., էջ 154): Ոմանք միտած են Գրիգոր Սկեւոացիի վերագրել Արարածոց մեկնութիւն մը, ինչպէս անոր ընծայուած է Եւագրի «Լուսաւոր պատեւագով» կոչուած գրքի մեկնութիւնը: Առաջինը կը վերաբերի Գրիգոր Խրիստոսին, իսկ երկրորդը Սկեւոացիի գրչէն չէ (հմմտ. Չարբհանէլեան, Պատմ. հայ հին Դպ., էջ 695, տպ. 1886, նոյնը տպ. 1932, էջ 716 եւ Սարգիսեան Հ. Բ., Եւագր Պոնտացի..., էջ 259):

Գրիգոր Սկեւոացի իր զարուն կարկառուն ղեմքերէն է եւ արժէքաւոր գրիչ: Կը թաղուի Սկեւոյի մէջ (Ալիշան, Հայապատում, Ա., էջ 97):

Գրիգոր վարդապետի քեռորդին է ԳԵՈՐԳ վարդապետը, որ անոր Սկեւոացի եւ Լամբրոնացի զոյգ յորջորջանքները ժառանգած է՝ միեւնոյն պատճառներով: Ուսումը նախ կ'առնէ Կիլիկիայի մէջ եւ ապա առաւելագոյնին հետամուտ եւ Արեւելքը՝ մերձուստ ճանչնալու դիտաւորութեամբ՝ կ'անցնի Հայաստան, ուր յատկապէս Խորվիրապի, Թեղեանց եւ Սաղմոսաց վանքերու մէջ կը

մնայ եւ մասնաւորապէս Վարդան Արեւելք-
ցիի կ'աշակերտի: Ապա վերագառնալով Հայ-
րենիք՝ կը հաստատուի Սկեւոպի մէջ նուե-
րուելով ուսուցչութեան: Այնպէս կը թուի
թէ յատուկ հակում ունեցած ըլլայ գրչա-
գրութեան եւ անոր արուեստին: Փոյթ տա-
րած է այդ միտութիւնը զարգացնելու Հա-
յաստանի մէջ եւ յետոյ Կիլիկիայի մէջ եւ
այդ՝ շատ գովելի է: Լաւ արդիւնք ձեռք
ձգած է: Ստեփանոս Գոյներ Երեցանց եւ
Կոստանդին զինքը կը յորդորեն իր հմտու-
թիւնը մագաղաթի եւ թուղթի յանձնելու
ժամանակակիցներու եւ ապագայ սերունդի
օգտակար ըլլալու համար: Գէորգ քիչ մը
զօրութեամբ, բայց յանձնառու կ'ըլլայ
եւ կը գրէ «Արուեստ Գրչութեան», որուն
նախարանին մէջ համեստօրէն կ'արտայայ-
տուի «Անպարապ անձամբ ձեռնարկեցի ի
գրելի գոս, այրս թշուառ եւ ծաղկաքաղ արա-
րեալ գմանն ինչ գրելոցն յԱռիստակիսէ հոե-
տոր գրչէ եղի աստ» (Ալիշան, Սիսուան, էջ
103): Յայրմաւորքի մը մէջ կը կարգանք.
«Առնէր եւ զարուեստս գրչութեան գեղեցիկ
եւ ճարտարութեամբ, քանզի ազնիւ էր եւ
արագ առ ի գրել ըստ նմանութեան մեծին
եւազրեա... Զրոյրակ գիր հայրենի եւ զա-
ղիւսակ հին տառ յարգի, նաեւ զճոխ վերա-
դասի, որ համայն իցէ բաղձալի... բազմաց
առնէր արդիւնս եւ յովովից գրէր տառս գե-
ղեցիկս, ոչ միայն ընկերակցաց, այլ եւ մե-
նաստանից» (Տաշեան, Յուլիս, էջ 46):
Անոր նկարչական եւ գրչական արուեստին
կը հային նմանապէս իր աշակերտին (Մով-
սէսի) սա տողերը. «Գծէր եւ կանոնս կար-
գաւորս, առնէր համարս գլխոց եւ ցանկք եւ
նախադրութիւնս Աստուածաշնչից» (Մի-
ւուան, էջ 103. հմմտ. Ակիւնեան Հ. Ն., Մա-
տենադրական Հետազոտութիւնք, Ա., էջ 28):
Գէորգ, որ «Չարգարեալ է Առաքինու-
թեամբ» Սկեւոպի առաջնորդը կ'ըլլայ: Կը
մեռնի 1301ին:

Անիկա «Ըստ ինդրոյ արքային Հեթմոյ
արար զՄեկնութիւն մարգարէութեան Եսա-
յեայ կամ Գրէր եւ մարգարէին Եսայեայ լայն
եւ ընդարձակ մեկնութիւն, հրամանաւ ար-
քային Հայոց» (Տաշեան, Յուլիս, էջ 358):

Սորազիրն է Չեռագրի մը համաձայն
«Համառօտ ժողովուսն սուրբ մարգարէին
Եսայեայ ի լուսաւոր մեկնչացն Տեառն
Եփրեմի Սորին Ասորոյ Յովհ. Ոսկերերանի,
Կիւրղի Աղեքսանդրոյ հայրապետին Տեառն
Հեթմոյ Գէորգայ վարդապետի արարեալը»
(հմմտ. Թօփճեան, Յուլիս, էջ 60):

Գէորգ վարդապետը նախարանին մէջ
մեկնութեան պատմութիւնը կ'ընէ՝ մանրա-
մասնօրէն (հմմտ. Չարբհ., Պատ. Հայկ. հին
Դպ., Ա., էջ 719, ուր եւ ուրիշ տեղեկու-
թիւններ): Հ. Ալիշան մեկնութեան տարին
կը միտի դնելու 1289—1292 եւ այդ հաւանա-
կան է, պարագաները նկատի առնելով. նմա-
նապէս կարելի է ընդունիլ որ Հեթում թա-
գաւորը գոհ մնացած է մեկնութենէն, զի
Գէորգ վարդապետ գիտցած է մեղուի նման
Ոսկերերանի, Կիւրղի եւ ուրիշ մեկնիչնե-
րու հիւթերն ու նիւթերը ընտրովին ծծել,
փեթակի մէջ ամփոփել եւ զանոնք զարգաց-
նելով հրամցնել: Այդ՝ իր ընտրելագոյն երկը
կրնայ համարուիլ: Անկէ բաւական ձեռա-
գիրներ հասած են: Հետաքրքրական է Ար-
մաշի Չեռագրի, որուն համաձայն ան
գրուած կ'ըլլայ 1296ին եւ Սարգիս Շնորհա-
լին Գէորգ վարդապետին օժանդակած
(հմմտ. Հասկ. Հայագիտ. Տարեգիրք, 1948,
էջ 72): Սոյն մեկնութենէն հատուածներ
հրատարակուած են Յովհան Ոսկերերանի
Եսայեայ մեկնութեան մէջ, Վենետիկ 1880,
էջ 482:

Գէորգ վարդապետը Յովհաննէս ար-
քայեղբոր խնդրանքներու վրայ կը գրէ Յով-
հաննէս Աւետարանչի Ներքող մը եւ Գործք
Առաքելոցի մեկնութիւնը, որ կը հրատարա-
կուի Վենետիկ 1839ին:

Հ. Ալիշան կը խորհի՝ թէ Գէորգ Սկե-
ուպի նմանապէս Սուլ եւս կոչուած ըլլայ եւ
ան ըլլայ Շարահաններու ուղղողն եւ սրբա-
դրողը, սակայն այնքան հաւանական չ'երե-
նար, զի առաջին յիշեցի Շարահանոց 1309ին
կը սերի, մինչ ան արդէն մեռած կ'աւան-
դուի (Սիսուան, էջ 105):

Գէորգ վարդապետի կը վերագրուին դեռ
ուրիշ գործեր. այսպէս՝ Գանձեր եւ «Ճառս
Ներքողականս ի պատիւ սրբոց» (անդ, էջ
103 եւ 104, հմմտ. եւ Հայագաւտում, Բ.,
էջ 505):

Սրեւելք ուսած է նաեւ Ստեփանոս Սկեւոպի,
որ Հեթում թագաւորէն Հայաստան կ'առաքուի Կոս-
տանդուպոլիս Սկեւոպի կաթողիկոսութենէ հրաժա-
նելով լուրջ ապու (Օրբէլեան, Պատմ. Սիւնեաց,
էջ 319—323):

Անոր մահը կ'արժէր աւաղել եւ ահա
Մովսէս վարդապետ կ'ողբայ՝ «Աւաղ ինձ
յետնոյս թէ որպէս հայր կորուսի, գոր-
պիսի դաստիարակ, գորպիսի յորդորիչ եւ
մխիթարիչ...»:

Այս տողերէն յայտնի կը տեսնուի որ
Մովսէս ինչ յարաբերութեան մէջ է Գէորգ
վարդապետի հետ. անոր աշակերտն է եւ
այն՝ թերեւս Սկեւոպի մէջ: Անիկա ժամա-
նակի գեղեցիկ սովորութեան համաձայն
երախտադիտութենէ մղուած կը գրէ՝ «Պատ-
մութիւն վարուց երջանիկ եւ տիեզերալոյս
բարունոյն Գէորգեայ Ծննդեան... կը սկսի
Յաստուածային յանձնասկան խորան...»
(Միւրմէեան Արտ. արքեպ., Մայր Յուլի-
սայ. Չեռ. Երուսաղէմի, Ա., էջ 32) կամ
Դրուատ բանի սուղ ինչ պատմագրաբար
յերջանիկ բարունապետն եւ քաղցրաբար-
բառ վարդապետն Գէորգ Լամբրոնացի» (Հա-
յագաւտում, Բ., էջ 504):

Ծանօթ է ուրիշ Գէորգ վարդապետ մը
ալ, որ աւելի արտագրութիւններով կը
գրադի (հմմտ. Սիսուան, էջ 98 եւ 516. Հա-
յագաւտում, Բ., էջ 417. հմմտ. վերը):

Նախորդ Գէորգ Սկեւոպի ժամանա-
կակից է եւ անոր մահէն վերջ դեռ տարիներ
ապրած՝ Միխիթար Սկեւոպի վարդա-
պետը, զոր Կոստանդին կաթողիկոսը եւ Հե-
թում թագաւորը (վերջինս զինքը կանխա-
իրեն հետ Թաթարներու տարած էր. հմմտ.
Կիր. Գանձ., էջ 213) կը յղեն նուիրակ ու
վիճարանող Աքքիա քաղաքը Ուրբանոս Դ.
Քահանայապետի Լեկատին: Սա՝ զինքը նախ
սիրով չ'ընդունիր — թերեւս եպիսկոպոսի մը
կը սպասէր — սակայն յետոյ կը գնահատէ
երբեւ «այր իմաստուն եւ բանիբուն»: Վի-
ճարանութեան նիւթը կ'ըլլայ Եկեղեցոյ
նուիրապետութիւնը եւ յատկապէս Պետրոս
Առաքելապետի գլխաւորութեան հարցը:
Միխիթար վերագարձին՝ այդ մասին գրու-
թիւն մը կը ներկայացնէ թագաւորին: Անկէ
բաւական թուով ձեռագիրներ հասած են:
Հրատարակուած է Երուսաղէմ 1865ին.
«Միխիթարայ քահանայի Սկեւոպեայ Պատաս-
խանիք յաղագս համատուութեան ԺԲ. Առա-
քելոց»: Իսկ Կաստաղոնի Յակոբ եպիսկո-
պոսի խնդրանքով Միխիթար կը գրէ Յոյ-
ներու պատրիարքութեանց զէմ գրութիւն
մը: Հաւանօրէն ունեցած ըլլայ դեռ ուրիշ

մանր երկեր (հմմտ. Չարբ., Պատմ. Հայ.
հին Դպր., էջ 749—750 եւ Հայագաւտում,
Ա., էջ 104):

Միխիթարէ շատ առաջ ապրած է ՍՏԵ-
ՓԱՆՈՍ ԱՂԱՄ կրօնաւորը, որ թերեւս Սկե-
ուպի միաբաններէ եղած ըլլայ: Գրող չէ,
այլ գրչագրութեան քաջալերող: Նիւթապէս
լաւ վիճակ ունենալով հետամուտ եղած է
որ Աւետարաններ գրուին տոկուն եւ ընտիր
նիւթերու վրայ եւ բովանդակութեան զու-
գընթաց՝ ներկայացնեն ճաշակաւոր նկար-
ներ եւ զարդեր: Յաջողութիւն ունեցած է:
Անոր համար գրուած է Լեմբերգի նշանաւոր
Աւետարանը, որուն նիւթը Կիւրոսէն բե-
րուած է: Հ. Ակիւնեան կը խորհի թէ անիկա
առնչութիւն չունի Տարսոնի համանուն
եպիսկոպոսի հետ, որ առաջնորդ է Տար-
սոնի եւ Մլիճի (Սկեւոպի Աւետարանը 1197
թուականէն Լվովի Հայ արքեպիսկոպոսա-
րանի մէջ, Վիեննա 1930, էջ 11—13. հմմտ.
եւ Ալիշան, Սիսուան, էջ 97 եւ 470):

(Շարունակելի): Հ. Հ. ՈՍԿԵԱՆ